# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

« ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀՔԿԴ-17/1 » ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար ավտոպահեստամասերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 06.04.2017թ. ժամը 11-00-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Ս.Պետրոսյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ. Պետրոսյանը, Վ.Մկրտչյանը, Վ. Հարությունյանը, Ե.Հովհաննիսյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

**<u>Օրակարգ</u>**

***<u>Հայտերի բացման և գնահատման մասին</u>***

**1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները**

«ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀՔԿԴ-17/1» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին.

Ա) հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

**1. «ՀՈՒՅՍ-ՄՈՏՈՐ» ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան, Զավարյան 12)**
**2. «ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ (ք. Երևան, Նար-Դոսի 122)**
**3. «ՄՈՍԷՍՔՈ» ՍՊԸ (ք. Արտաշատ, Խանջյան 17/43)**
**4. «Արտ մոթորս» ՍՊԸ (ք. Երևան, Էրեբունի 18, գործ. Գ. Նժդեհ 56ա/101)**
**5. «ՖԼԵՇ ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ (ք. Երևան, Գայի պ. 1/7)**
**6. «ԴԱՐՖ» ՍՊԸ (ք. Երևան, Հանրապետության 49, 7/1)**
**7. «ԺԱԿ ԵՎ ԳՈՌ» ՍՊԸ (ք. Հրազդան,Կենտրոն թաղ., 19/40)**
**8. «ԱՎՏՈՖԱՆ ԷՅ ՍԻ» ՍՊԸ (ք. Երևան, Արշակունյաց 52/1)**
**9. «ԷՔՍՊՈՐՏ ՕՅԼ» ՍՊԸ (ՀՀ. ք. ք. Երևան, Շիրակի 47)**
**10. Հայկ Գալստյան Ա/Ձ (ք. Հրազդան, Կենտրոն թաղ. 84շենք, 5 բն.)**
**11. «ՆԱԿՕՅԼ» ՍՊԸ (ք. Երևան, Սեբաստիա 141/1)**
**12. «ԻՆԳԼԻՇ ԹՐԵՅԴ ՀԱՈՒՁ» ՍՊԸ (ք. Երևան, Չարենցի 4/17)**
**13. «ՍԵՆՏՐԱԼ» ՍՊԸ (ք. Երևան, Դավթաշեն եղվարդի խճ. 108)**

Բ) հայտ չեն ներկայացրել համակարգում 06.04.2017թ.-ի դրությամբ գրանցված մնացած մասնակիցները:

**2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին**

2.1. Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

**3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ**

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

**4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և նախահաշվային գինը/ՀՀ դրամ/**

| Չ/Հ | Անվանում | Քանակ | Նախահաշվային գին | Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/ | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | «ԱՐՊԱ ՆԻՎ» ՍՊԸ | «ՖԼԵՇ ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ | «ԴԱՐ Ֆ» ՍՊԸ | «ՀՈՒՅՍ-ՄՈՏԱՐ» ՍՊԸ | «ՄՈՍԷՍՔՈ» ՍՊԸ | «ԻՆԳԼԻՇ ԹՐԵՅԴ ՀԱՈՒԶ» ՍՊԸ | «ԱՎՏՈՖԱՆԷՅՍԻ» ՍՊԸ | «ԷՔՍՊՈՐՏ ՕՅԼ» ՍՊԸ | «ԺԱԿ ԵՎ ԳՈՌ» ՍՊԸ | «ՆԱԿՕՅԼ» ՍՊԸ | «Արտմոթորս» ՍՊԸ | Հայկ Գալստյան Ա/Ձ* | «ՍԵՆՏՐԱԼ» ՍՊԸ |
| 1 | շարժիչի յուղ, կիսասինթետիկ | 600 | 1500000 | | 900000 | | 610000 | 622500 | 629500 | 800000 | 537000 | 545000 | 1000000 | 1065000 | | |
| 2 | հակասառիչ հեղուկ՝ A դասի կոնցենտրանտ, A-65 դասի՝ 65 C սառման ջերմաստիճանով | 250 | 187500 | | | | 228958 | | | | | 260417 | | 218750 | | |
| 3 | կուտակիչ մարտկոցներ | 9 | 229500 | 190485 | 202500 | | 239250 | | | | | 277500 | | | 271650 | |
| 4 | կուտակիչ մարտկոցներ | 5 | 107500 | 80825 | 83333 | 83333 | 99792 | | | | | 108333 | | | 118580 | |

| | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **5** | ավտոմեքենաների անիվներ | 4 | 240000 | 129327 | 98600 | 143333 | | | | | | | | | | 161600 |
| **6** | ավտոմեքենաների անիվներ | 4 | 320000 | 95993 | 104833 | 235000 | | | | | | | | | | 182500 |
| **7** | ավտոմեքենաների անիվներ | 4 | 260000 | 201327 | 140000 | | | | | | | | | | | 207500 |
| **8** | ավտոմեքենաների անիվներ | 104 | 2496000 | 1334493 | 1560000 | 1438667 | 1802233 | | | | | | | | | |
| **9** | ավտոմեքենաների անիվներ | 20 | 560000 | 463300 | 450000 | 458333 | | | | | | | | | | |
| **10** | ավտոմեքենաների անիվներ | 12 | 420000 | 387980 | | 305000 | | | | | | | | | | 592500 |
| **11** | ավտոմեքենաների անիվներ | 16 | 560000 | 298640 | 333333 | 373333 | | | | | | | | | | |
| **12** | ավտոմեքենաների անիվներ | 40 | 978920 | | 631667 | 866667 | 832867 | | | | | | | | | |
| **13** | ավտոմեքենաների անիվներ | 8 | 100000 | 78653 | | 73333 | | | | | | | | | | |
| **14** | ավտոմեքենաների անիվներ | 12 | 165600 | | 158000 | 130000 | | | | | | | | | | |

*Հանդիսանում է ԱԱՀ չվճարող

**5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին**

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**Հանձնաժողովը արձանագրեց, որ**

1. Հաշվի առնելով, որ ընթացակարգի 2-րդ չափաբաժնի համար ընկերությունների կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցում է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, **անհրաժեշտություն է առաջացել վարելու գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ:**
Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, համաձայն որի առաջարկվող գինը չի կարող պակաս լինել ինքնարժեքից, բանակցությունների կարող են մասնակցել միայն այն մասնակիցները, որոնց առաջարկած գնի ինքարժեքը բարձր չէ նախահաշվային գնից:

**Հանձնաժողովը որոշեց՝**

1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետը՝ հաջորդ նիստը հրավիրել **2017թ. ապրիլի 11-ին, ժամը 11:00-ին,** ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում, 621 սենյակում:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ ______________ Ս.Պետրոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ ______________ Վ. Պետրոսյան

______________ Վ.Մկրտչյան

______________ Ե.Հովհաննիսյան

______________ Վ. Հարությունյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ______________ Մ.Մուրադյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

« ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀՔԿԴ-17/1» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար ավտոպահեստամասերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 11.04.2017թ. ժամը 11-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Ս.Պետրոսյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ.Մկրտչյանը, Վ. Հարությունյանը, Ե.Հովհաննիսյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

### 1. Միաժամանակյա բանակցությունների մասին

Բանակցությունները չեն կայացել. ոչ մի մասնակից չի ներկայացել:

**Հանձնաժողովը որոշեց.**

1.1 Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչել՝

1 չափաբաժնի համար **«ԷՔՍՊՈՐՏ ՕՅԼ» ՍՊԸ**-ին,
3, 4, 6, 8, 11 չափաբաժինների համար **«ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ**-ին,
5, 7, 9, 12 չափաբաժինների համար **«ՖԼԵՇ ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ** –ին,
10, 13, 14 չափաբաժինների համար **«ԴԱՐՖ» ՍՊԸ** –ին:

1.2 Ընթացակարգի երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչել՝

1 չափաբաժնի համար **«ԺԱԿ ԵՎ ԳՈՌ» ՍՊԸ** –ին,
5, 7, 13 չափաբաժինների համար **«ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ**-ին,
4, 6, 11 չափաբաժինների համար **«ՖԼԵՇ ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ** –ին,
8, 9 չափաբաժինների համար **«ԴԱՐՖ» ՍՊԸ** –ին:

3, 10, 12, 14 չափաբաժինների համար մնացած մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են նախահաշվային գինը:

2. "Գնումների մասին" ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն ընթացակարգի 2 չափաբաժինը հայտարարել չկայացած:

3. Հաստատել ընթացակարգի 2 չափաբաժինը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը(կցվում է):

4. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի(այսուհետ՝ Կարգի) 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն փաստաթղթերի ստացումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, 15.00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

**Հանձնաժողովի քարտուղարին՝**

1. Համաձայն Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետերի՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ,
2. Համաձայն Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետերի՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ իրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ ____________________ Ս.Պետրոսյան

Հանձնաժողովի անդամներ՝

____________________ Վ.Մկրտչյան

____________________ Վ. Հարությունյան

____________________ Ե.Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ____________________ Մ.Մուրադյան